

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱ-ՆԵԼԻ կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի.

Տեսք զայս Կոնդակ հաստատութեան առ յապայն, ի գործադրութիւն յանուն Տ. Թեմակալաց վիճակին Պարսկ.— Հնդկաստանի, փոխանորդաց Նոցին, Առաջնորդական Խորհրդարանին Ջուղայու, Թեմական վերատեսչաց, հոգաբարձուաց դպրոցաց և համայն ժողովրդեան Հայոց, վասն նորոգ բացեալ դպրոցին յանուն և ի յիշատակ ի Տէր հանգուցեալ Փաղանի Խորհրդական Գէորգայ Քանանեան։

Յիշատակաց արժանի հիմնադիրն դպրոցին վիճակիդ Պարսկական Գաղանի Խորհրդական Գէորգ Քանանեան, իբրև ճշմարիտ հայ և իբրև հարազատ զաւակ Մօրս Լուսոյ ս. Էջմիածնի, զգացեալ զպարտիս իւր առ ազգն և եկեղեցին՝ ի վերջին ամն իւր ցանկացեալ էր բանալ դպրոց մի ազգային ի կարևոր կենդրոնի միում յաղագս լուսաւորութեան, կրթութեան և դաստիարակութեան կարօտաւոր հայ մանկտւոյն, յանձնելով զիրագործումն ցանկութեան իւրոյ Տիկնոջ իւրում։ Յետ մահուան հանգուցելոյն բարեպաշտուհի ամուսին Նորին Գերազնուհի Տիկին Վառվառէ Քանանեան, իբրև հաւատարիմ աւանդապահ ամուսնոյն իւրոյ և կատարող կամաց հանգուցելոյն, սրբութեամբ կատարեաց զփափագ ամուսնոյն, տալով քառասուն և եօթն հազար ռուբլի յայն նպատակ։ Եւ ընկալեալ ի Մէնջ զհրաման և զօրհնութիւն ի գործ ձեռնարկութեան դպրոցին, որոշ-

եաց բանալ զայն ի Նոր Ջուղայ, յանձնելով զայն հոգ և հսկողութիւն Փոխանորդի Առաջնորդի վիճակիդ և միաբանի Մայր Աթոռոյս Հոգեշնորհ Տ. Բագրատ վարդապետի Վարդապարեան։

Արդ՝ որ տուաք զհաւանութիւն Մեր և զհաճութիւն յաղագս բացման Գէորգ Քանանեան ուսումնարանին ի քաղաքիդ Ջուղայու յԻրանեան աշխարհիդ, ընդ հովանեաւ Նորին Արեգակնափայլ Մեծութեան Մուզաֆար Էդդին Շահնշահին և յաջորդաց Նորին՝ ինքնակալացն Իրանի, պարտիս մեր համարիմք սովին Հայրապետական Կոնդակաւ հաստատել և տալ զծրագիրն Դպրանոցին յանփոփոխ գործադրութիւն յապագային։

Ա. Մեծարգոյ Տիկին Վառվառէ Քանանեանի ցանկութեան համաձայն Նոր-Ջուղայի կենտրոնական և յարմարաւոր տեղում պիտի կառուցուի նրա ամուսնու թողած դրամով մի նոր շէնք «Գէորգ Քանանեան» դպրոցի համար։

Բ. Այդ դպրոցի շէնքը լինելու է եկեղեցական սեփականութիւն, Մահմէտականաց օրէնքի համաձայն՝ վակուֆ։

Գ. Գէորգ Քանանեան դպրոցի պահպանութեան և յարատև գոյութեան համար Տիկին Վառվառէ Քանանեանը՝ ի յիշատակ իւր ամուսնու, Գաղտնի Խորհրդական Գէորգ Քանանեանի, և նրա ցանկութեան համաձայն, նուիրում է քառասուն հազար ռուբլի (40000), որ թողել է իր ամուսինը այդ նպատակով (բացի դպրոցի շէնքի համար յատկացրած գումարից)։

Դ. Դպրոցի պահպանութեան համար յատկացրած ամբողջ գումարը պիտի մնայ իբրև անձեռնմխելի դրամագլուխ Գէորգ Քանանեան դպրոցի անունով միանգամայն ապահով դրամատան մէջ։ Ամենայն Հայոց Կաթուղիկոսի, հիմնադրի (իսկ մահուանից յետոյ կաթուղիկոսարանների) և դպրոցի Հոգաբարձական մարմնի հսկողութեան և պահպանութեան տակ։

Ե. Եթէ հարկ լինի այդ դրամագլուխը հանել մի դրամատնից և դնել Ռուսաստանի կամ արտասահմանի այլ ապահով դրամատան մէջ, և կամ դնել մի ապահով և շահաբեր կալուածք, այդպիսի բոլոր պատասխանատու գործողու-

թիւնները պիտի կատարուին հիմնադրի (կամ կաթոլիկոսաբ-ների) և Քանանեան դպրոցի Հոգաբարձութեան և Ամենայն Հայոց Կաթուղիկոսի փոխադարձ համաձայնութեամբ և թոյլ-տուութեամբ։

Զ. Գէորգ Քանանեան դպրոցը առ այժմ երկդասեան է (հինգ տարուայ դասընթացքով), երկսեռ մանկապարտիզով, իսկ ապագայում, երբ Գէորգ—Քանանեան դպրոցի նիւթա-կան միջոցները կը ներեն, հետզհետէ պիտի բացուին յաջորդ դասարաններ ևս, և դառնայ միջնակարգ դպրոց՝ գործնա-կան առարկաներով։

Է. Գէորգ—Քանանեան դպրոցը առ այժմ լինելով երկ-դասեան, ծառայում է իբրև նախակրթական մասն Նոր—Զուղայում գոյութիւն ունեցող Կենտրոնական դպրոցի. վեր-ջինի հետ կապ ունենալով ծրագրի միութեամբ և յաջոր-դականութեամբ, Գ.—Քանանեան դպրոցը միշտ պիտի պահ-պանէ իր ինքնուրոյն գոյութիւնը։

Ը. Գէորգ—Քանանեան դպրոցը ընդ միշտ անփոփոխ պա-հելով իր անունը, գտնուելու է ազգիս Ամենայն Հայոց Կա-թուղիկոսի և թեմական առաջնորդի հսկողութեան և հո-վանաւորութեան տակ, բայց կառավարուելու է ընտրուած Հոգաբարձական մարմնի ձեռքով։

Թ. Հոգաբարձական մարմինը բաղկացած պիտի լինի ութը (8) անդամներից, որոնք պիտի ընտրուին Նոր-Զուղայու Հայոց եկեղեցիների ծխականների կանոնաւոր ժողովում, որ կայանալու է թեմական առաջնորդի նախագահութեամբ։

Ժ. Հիմնադիր Տիկին Վառվառէ Քանանեանը պատուա-ւոր Հոգաբարձուհի է Գ.—Քանանեան դպրոցի։

ԺԱ. Տիկին Վառվառէ Քանանեանը իրաւունք ունի ընտրել և նշանակել Փոխ Տեսուչ Գ.—Քանանեան դպրոցի համար՝ իւր և դպրոցի Հոգաբարձութեան փոխադարձ հա-մաձայնութեամբ, իսկ նրա մահուանից յետոյ կաթոլիկոսաբ-ների և Հոգաբարձութեան։

ԺԲ. Ի նկատի ունենալով, որ Գ.—Քանանեան դպրոցը բնականաբար շատ մօտ կը լինի հիմնադրի սրտին, Հոգաբար-ձութիւնը իր պարտքը կը համարի միշտ խորհրդակցիլ նրա

հետ այն ամեն կարևոր խնդիրների մասին, որոնք կարող են նպաստել Գ.—Քանանեան դպրոցի բարեկարգութեան ու յառաջադիմութեանը ըստ ուսումնականի և ըստ տնտեսականի։

ԺԳ. Հոգաբարձութիւնը ընդհանուր լինելով Նոր-Զուղայի երկսեռ դպրոցների համար, իւրաքանչիւր ուսումնական տարեվերջին ինչպէս Գ.—Քանանեան դպրոցի, նոյնպէս և Զուղայի միւս դպրոցների հաշիւները պիտի ապագրի և ներկայացնի Ամենայն Հայոց Հայրապետին, Առաջնորդին և Հասարակութեան ի քննութիւն։ Այդ հաշուի հետ միասին Հոգաբարձութիւնը պիտի ուղարկէ Գ.—Քանանեան դպրոցի մանրամասն հաշիւները և ուսումնական տեղեկագիրը Տիկին Վառվառէ Քանանեանին։

ԺԴ. Առաջնորդական Փոխանորդ և դպրոցների Վերատեսուչ Բագրատ վարդապետ Վարդապարեանը լինելու է ներկայացուցիչ հիմնադրի կողմից և ունենալու է ձայն Հոգաբարձական ժողովում. իսկ նրա բացակայութեան ժամանակ հիմնադիր Տիկին Վառվառէ Քանանեանը իրաւունք ունի ներկայացուցիչ ընտրել Հոգաբարձութեան անդամներից մէկին և կամ որ և է ձեռնհաս անձին Զուղայից։

ԺԵ. Գէորգ—Քանանեան դպրոցը, ինչպէս և Զուղայի միւս դպրոցները, միշտ դրուած պիտի լինին ազգային զօրեղ հիմքերի վերայ և կազմակերպուած ժամանակակից մանկավարժական պահանջների համաձայն։

ԺԶ. Գէորգ—Քանանեան դպրոցը հետզհետէ վերածելով Միջնակարգի, ծրագրի մէջ (բարձր դասարաններում) պիտի մտցնել գործնական գիտութիւններ, (արհեստագիտական, առևտրական և երկրագործական բաժինով՝ տեղական պայմանների համաձայն)։

ԺԷ. Գէորգ—Քանանեան դպրոցում ինչպէս և Զուղայի միւս դպրոցներում Հայոց լեզուն, Հայոց պատմութիւնը, Հայոց գրականութիւնը և Հայոց Եկեղեցական պատմութիւնը անհրաժեշտ առարկաներ պիտի լինին։

ԺԸ. Գ.—Քանանեան դպրոցում բոլոր առարկաները պիտի դասախօսուին Հայոց լեզուով, բացի պետական և օտար լեզուներից։

ԺԹ. Նոր Զուղայի դպրոցները կունենան մի ընդհանուր տեսուչ (Հոգաբարձական ժողովի ընտրութեամբ). իսկ Քանանեան դպրոցը առանձին փոխ տեսուչ, որոնք պիտի լինին հայ լուսաւորչական:

Ի. Տեսուչը Գ. Քանանեան դպրոցի վերաբերմամբ կարգադրութիւն անում է անպատճառ փոխ տեսչի հետ խորհրդակցելով և նրա միջոցով:

ԻԱ. Տեսուչը Հոգաբարձական ժողովի անդամ է և ունի մի ձայն, իսկ երբ խնդիրը վերաբերում է Քանանեան դպրոցին՝ փոխ տեսուչն ևս ներկայ պիտի դտնուի Հոգաբարձական ժողովին նոյն իրաւունքներով:

ԻԲ. Բոլոր ուսուցիչները պիտի ունենան բարձրագոյն կամ միջնակարգ կրթութիւն և լինին հայ:

ԻԳ. Տեսուչը, փոխ տեսուչը և ուսուցիչները իրրև մանկավարժական մարմին անկախութիւն պիտի ունենան կրթական և մանկավարժական խնդիրներում՝ անշուշտ դեկավարուելով դպրոցների համար մշակուած ծրագրով և կանոնադրութեամբ, որ վաւերացրած կը լինի Ծայրագոյն Հոգևոր Իշխանութեան կողմից:

ԻԴ. Եթէ ապագայում պայմանները փոփոխուելով հարկ լինի փոխադրել Գ.—Քանանեան դպրոցը Նոր-Զուղայից՝ Հայաստանի մի որևէ բաղմահայ յարմարաւոր կենտրոն, այդպիսի դէպքում այդ որոշումը պիտի կայանայ Ամենայն Հայոց Հայրապետի, կաթողիկոսարանների և Հոգաբարձութեան փոխադարձ համաձայնութեամբ:

ԻԵ. Ամեն տարի սեպտ. ամսին, Ս. Գէորգ Զօրավարի տօնին, պիտի մատուցանել պատարագ ի յիշատակ հանգուցեալ Գ. Քանանեանի և կատարել հոգեհանգիստ Նոր-Զուղայի Ամենափրկչեան վանքում կամ Ս. Գէորգայ եկեղեցում, ուր ներկայ պիտի դտնուին Քանանեան դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները:

ԻԶ. Հիմնադիրը (կամ կաթողիկոսարները) իրաւունք ունին ուղարկել մի ներկայացուցիչ՝ անձամբ մօտից ծանօթանալու համար Գէորգ—Քանանեան դպրոցի հետ և դեկուցանելու:

Հաստատելով զվերոգրեալ ծրագիրն՝ Մեք լիայոյս եմք՝ զի Դեր. Աթոռակալք Նոր-Ջուղայի՝ Բարեշնորհ Փոխանորդք՝ Խորհրդարանն Առաջնորդարանիդ՝ որպէս և Հոգաբարձուք և Տեսուչք սեպուհ պարտիս ինքեանց համարեսցին սրբութեամբ և անթերի կատարել կէտ առ կէտ զյօդուածս Ծրագրիս՝ որ ի Կոնդակիս՝ առ ի արդիւնաւոր և յարատև կացուցանել զդպրոցն ըստ ցանկութեան ազգասէր հիմնադրին և Բարեպաշտուհի Տիկնոջն՝ որ ունի հաստատապէս զդիտաւորութիւն ընդարձակելոյ զայդ հաստատութիւն՝ ապահովելով նորանոր նուիրատուութեամբք յիւրմէ կողմանէ ի պէտս գործնական դիտելեաց՝ նախանձելի յաչս Հայ ազգին հանդիսացուցանելով՝ որով և փառաւորին հոգիք հիմնադրացն յերկինս և օրհնեսցին յիշատակք նոցին յաշխարհիս յապագայ յաղագս։

Եւ մեք մաղթելով ի Տեառնէ զհանգիստ հոգւոյ հանգուցեալ Հիմնադրին և արեշատութիւն Դերապնուուհի Տիկին Վառվառեայ Քանանեան՝ իրագործողի զկամս ամուսնոյն՝ աղօթեմք զի Տէր Աստուած յարատև պահպանեսցէ զայդ նոր ուսումնարանդ վասն ազգիս մերոյ և փոքրիկանց մերազնէից. զօրացուսցէ Փրկիչն զաշխատաւորս և զվաստակաւորս՝ զՀոգաբարձուս և զինամակալս Ազգային Հաստատութեանդ։ Շնորհեսցէ Ս. Հոգին շնորհ և իմաստութիւն Տեսչի՝ ուսուցչաց՝ ուսանողաց և աշակերտելոց յայդմ հաստատութեանդ՝ զի լիցին անդամք պիտանիք ազգիս և հարազատ զաւակք Ս. Էջմիածնիս՝ իրագործողք կամաց ցանկութեան բարեյիշատակ Հիմնադրին։

Յիշատակ արդարոյն օրհնութեամբ յիշեսցի և օրհնութիւն Աստուածային հանդերձ պահպանութեամբ Աջոյ Ս. Լուսաւորչին ի վերայ Հաստատութեանդ եղիցի. Ամէն։

Ի վերայ իսկականի ստորագրեալ է
Մկրտիչ Եպիսկոպոս Ամենայն Հայոց

Տուաւ Կոնդակս Հայրապետական
Ցամի շնորհաց Փրկչին 1902, ի 6 Յունիսի,
Եւ ըստ Մերումս Տոմարի Ռ.Ց.Ծ.Ա.
Ի Հայրապետութեան Մերում Թ. ամի,
Յայրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ի Վաղարշապատ.
Համար 871։